բաքաղաքից։ Լուրերին նայելով, այս օրերս սպասւում է, որ Վեհ. Կաթողիկոսը (ինչպէս հաղորդում են մայրաքաղաքի ռուս թերթերը) նորից դիմումներ կանէ ռուսաց և ֆրանսիական պետութիւններին։

ԳՐՉԻ ՏՕՆԸ

Հոկտեմբեր ամսին հայ ազգը տօնելու է հայ գրչի տօնը՝ հայոց տառերի գիւտի 1500 ամեակը և հայ տպագրութեան 400 ամեակը։

Տօնը իրաւ որ ազգային և ամենքիս սրտին մօտ է, և թէպէտ թէ մէկի և թէ միւսի ժամանակագրութեան մէջ մենք սխալւում ենք, որովհետև թէ մէկի 1500 ամեակն է վաղուց անցել և թէ միւսի 400 ամեակը, այնուամենայնիւ հետևելով այն առակին թէ՝ լաւ է ուշ քան երբէք, մենք ևս միանում ենք ընդհանուրի այդ ցանկութեան և որոշեցինք «Արփի»-ի էջերում տալ գրչի մարդկանց՝ հին և նոր հայ գրողների, խմբագիրների։ տպագրութեան գործին ծառայողների պատկերները և եթէ որևէ մէկի մօտ գտնուեն հազուագիւտ պատկերներ, խնդրում ենք ուղարկել մեզ, որպէսզի ընդհանուրի սեփականութիւն դարձնենք։

ՀՈՎՈՒԵՐԳՈՒԹԻՒՆ

ՄԱՆՐԱՎԷՊ

Պետեր Ալլտենբերգի

—Սիրելիս, ձեռաց մտնենք այն խանութը, ուր քեզ այնչափ դուրեկան ջահել գործակատարուհին է ծառայում... Ես հօ գիտեմ, որ դու սրտանց ուզում ես այնտեղ մտնել։

—Ո՛չ, սիրելիս, ճշմարիտն եմ ասում, որ ոչ,—դա մի անցողակի տպաւորութիւն էր, ուրիշ ոչինչ։ Դու այնչափ սիրելի, այնպէս հրապուրիչ, այնպէս ազնիւ ես, որ...

—Ո՛չ, ոչ, մտնենք այն խանութը, դա թող իմ խաթերս համար լինի. արա այդ բանը, ես այդ ուզում եմ...

—Ինչպէս կուզես, Ինձ համար միևնոյն է։ Գնանք։

Կինը, վարդագունած, փայլող դէմքով, նրան թեի տակն արաւ ու միասին դէպի այն կողմը դիմեցին։

Դրանից երկու ժամ առաջ երիտասարդը մենակ եղել էր այդ խանութում՝ այն հրապուրիչ գործակատարուհու մօտ։

Գ. Բ.



ՄԱՅԻՍԻՆ

Օ՛, դու մայիս,,
Կեանքի ամիս,
Լսիր խնդիրս լուռ ու մունջ,
Բուժիր սրտիս,
Թախծոտ սրտիս
Ցաւն ու վէրքը մահաշունչ։

Ա՛խ, ես կուզեմ
Երգը վրսեմ
Կեանքի յաւէտ, սրբազան,
Երգը հիւսեմ
Ու նոր մտնեմ
Անդորր ու սև դերեզման...

Պահարի